

Նուրտինեան մեռած է 56 տարեկան՝ 6 փետր. 1803ին, եւ թաղուած ի Լիվոնոյ: Ունի կտակ մը, որով Լիվոնոյ քաղքին համար քանի մը բարեգործական տրամագրութիւններ ընելէն ետեւ՝ ստացուածոց ժառանգ կը զնէ Կ.Պոլիս մնակող իւր եղբորորդին Մուրատ Նուրտինեանը, իսկ գրքերն ու գրութիւնները կը թողու Անտոնեան Միաբանութեան վանքին (Գիւ. Լիվ.), ուր եւ կը մնան Սարգիս Արք. Սարաֆեանի գրոց հետ, զորս ժառանգած էր Նուրտինեան Վ.:

* * *

Աշխատասիրութիւնս անշուշտ պիտի ընդարձակէ քննասէր, եկեղեցասէր, պատմագէտ եւ հնախօս ընթերցողներու ծանօթութիւնը. եւ հայ կաթողիկեայ հասարակութեան ժԸդարու նշանաւոր մէկ քանի եկեղեցականաց կենսագրութիւնը ծանօթացընելով՝ ազգին նոյն մասին հետզհետէ կազմակերպումը պիտի ներկայացընէ:

1.

Սարգսի ծնունդը, պատմանեկութիւնն եւ աշակերտին Յովհաննու Կոլոտի:

Ակնցի Ալեքսան կամ Աղեքսանդր արքայն (լումայափոխն) 1698ին Կ.Պոլսոյ մէջ ամուսնացաւ Պոլսեցի Թագուհւոյ հետ: Թագուհի իւր անդրանիկն ի Կ.Պոլիս յղանալէն ետեւ՝ երկուքն ալ գործով Ադրիանուպոլիս փոխա-